ՊԱՇՏՈՆ	Բիզնես վերլուծաբան
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	13/05/2025թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	23/05/2025թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա թիմին որպես Բիզնես վերլուծաբան:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նախագծերի բիզնես/համակարգային վերլուծություն,
- Բիզնես գործընթացների, տեխնիկական առաջադրանքների կազմում և տրամադրում ծրագրավորողներին,
- Օգտատերերի առօրյա աշխատանքի հետ կապված սցենարների, ինչպես նաև թեստավորման սցենարների ձևակերպում,
- Իրագործված նախագծերի թեստավորում,
- Փոխգործակցություն Բանկի գործընկերների հետ (ինտեգրատորների և վենդերների հետ),
- Առաջադրանքների պատվիրատուների (բանկի առանձին ստորաբաժանումների) համար իրագործված լուծումների հանձնման/ընդունման կազմակերպում ,
- Համակարգի օգտատերերի համար ուղեցույցների պատրաստում/թարմացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն,
- Բիզնես/համակարգային վերլուծաբանի աշխատանքային փորձ,
- Նախագծերի կառավարման փորձը ցանկալի է,
- Օգտատերերի համար ուղեցույցներ կազմեու փորձ,
- SQL -ով աշխատելու փորձ (նվազագույնը բազային մակարդակով իմացությունը ցանկալի է),
- Բանկում աշխատելու փորձը ցանկալի է,
- Ռուսերենի լավ իմացություն (պահանջվում է համակարգերի ինտեգրատորների հետ հաղորդակցվելու և նամակագրության համար),
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն,
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում,
- Տարբեր իրավիճակներում աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակություն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/24 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://idbank.am/